

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թովմաս Ռոբերտի Գրիգորյանը ծնվել է 19.05.1973թ, ք. Վանաձորում:

1980-1990 թթ. սովորել է Սայաթ-Նովայի անվան N10 միջնակարգ դպրոցում:

Ավարտել է Երևանի Պետական ագրարային համալսարանի «Ագրարային արտադրության էկոնոմիկա և կառավարում» ֆակուլտետը, այնուհետև ստացել է մագիստրոսի որակավորում, ասպիրանտուրան թողել է կիսավարտ:

1991-ից զբաղվել է գործարարությամբ, 1999-ին հիմնադրել է «Թալգրիգ» ընկերությունը, իսկ 2002-ին նաև համանուն Ֆուտզալ ակումբ, որը երկու անգամ դարձել է Հայաստանի չեմպիոն:

2004թ. ընտրվել է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի Գործադիր կոմիտեի անդամ:

2006-2013 թթ. եղել է ՀՖՖ «Կանանց և Ֆուզալի կոմիտեի» նախագահ:

2013-ից առ այսօր ՀՖՖ «Ֆինանսական Կոմիտեի» նախագահն է:

2017 թ. հիմնադրել է «Լոռի» ֆուտբոլային ակումբը, որը 2018 թ. դարձել է Հայաստանի Առաջին խմբի չեմպիոն՝ նվաճելով Բարձրագույն խմբի ուղեգիր:

Ամուսնացած է: Ունի որդի և 2 դուստր: